ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ԴԵՐԸ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Ռուսական կառավարության հաստատած կանոնադրության համաձայն՝ 1837 թ. Ռուսական Կայսրության սահմաններում ստեղծվում են հայոց հոգեւոր թեմեր՝ հոգեւոր կառավարման օրգաններով՝ թեմական կամ վիճակային կոնսիստորիաներով: Նշված կանոնադրության համաձայն՝ 1837 թ. օգոստոսի 6-ին հիմնադրվել է Վրաստանի եւ Իմերեթի հայոց վիճակային կոնսիստորիան, որը հաշվետու էր Էջմիածնի սինոդին:

Վրաստանի եւ Իմերեթի հայոց վիճակային կոնսիստորիայի իրավասության շրջանակներում են եղել եկեղեցական կալվածքների, շինությունների, գույքի, ուխտատեղերի կառավարումը կամ ֆինանսատնտեսական գործունեությունը, հոգեւորականներին պաշտոնների նշանակելը եւ ազատելը, երեսփոխանների ընտրությունների կազմակերպումը, պսակադրության, ամուսնալուծության եւ թաղման հարցերով զբաղվելը, հոգեւոր պարտքեր տալը, կտակների, հանգանակությունների եւ նվիրատվությունների հետեւանքով գոյացած միջոցների տնօրինությունը, ռոճիկներ, նպաստներ, թոշակներ տալը, ծիսական դպրոցների կառավարումը եւ այլն:

Կոնսիստորիայի իրավասությունը տարածվում էր Վրաստանի, Գանձակի, Ղազախի, Շամշադինի եւ Լոռիի հայոց եկեղեցիների ու ծխերի վրա[1]: Պահպանվել են Թելավի, Թիֆլիսի, Գորիի, Լոռիի եւ այլ վայրերի հոգեւոր վարչությունների հայտարարությունները, խնդրագրերը, բողոքները՝ անձնական, հողային, ծիսային եւ այլ հարցերի վերաբերյալ, ինչպես նաեւ կոնսիստորիայի օրագրությունները, նիստերի որոշումներն ու արձանագրությունները: Կոնսիստորիան բաղկացած էր թեմի բարձրաստիճան հոգեւորականներից՝ թեմական առաջնորդի գլխավորությամբ: Պահպանվել են Ներսես Կաթողիկոսի կոնդակը եւ այլ գրություններ (ընդգրկում են 1850 թ. հունվարից մինչեւ 1859 թ. մայիսի 25-ը)՝ Վրաստանի եւ Իմերեթի հայոց վիճակային կոնսիստորիայի նոր անդամներ նշանակելու մասին[2]: Հարցերը քննարկվում եւ վճիռներն ընդունվում էին պարբերաբար գումարվող նիստերում:

Նստավայրը Թիֆլիսն էր, հետեւաբար, փաստաթղթերի մեծ մասը, այսօր էլ լինելով Հայաստանից դուրս, դժվարացնում է հարցի ուսումնասիրությունը: Կոնսիստորիայի գործունեության վերաբերյալ միակ եւ արժանահավատ աղբյուրը Հայաստանի Ազգային Արխիվում գտնվող Վրացահիմերեթական թեմի 53-րդ ֆոնդն է, որը Խորհրդային Հայաստանի պետական կենտրոնական պատմական արխիվին է հանձնել Վրացական ԽՍՀ

1 Լոռին իր շրջակայքով, Ղազախի մոռրավությունը եւ Շամշադինի սուլթանությունը 1801 թվականից մտնում էին Քարթլի-Կախեթի թագավորության կազմի մեջ:

2 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 474:

պետական կենտրոնական պատմական արխիվը: Ֆոնդի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ կոնսիստորիան մեծ դեր է խաղացել հայոց եկեղեցական կազմակերպության եւ իր իրավասության տակ գտնվող տարածքների բնակչության կյանքի կազմակերպման գործում: Այն բնակչությանը հնարավորություն է ընձեռել տարբեր հարցերով, անգամ հոգեւոր հայրերի դեմ բողոքներով պաշտոնապես դիմել հոգեւոր կազմակերպություններին: Այդ են վկայում բնակիչների բազմաթիվ դիմումները, ինչպես օրինակ, 1894 թ. Վարդաբլուր գյուղի հասարակության խնդրագրերը Վրաստանի եւ Իմերեթի հայոց վիճակային կոնսիստորիային՝ քահանա Հովհաննես Զոհրաբյանին պաշտոնից ազատելու մասին, 1891 թ. Խաչատուր քահանա Տեր-Մելիքսեթյանցի դեմ Շնող գյուղի տանտիրոջ (հավանաբար տանուտերի - Հ. Ա.) բողոքների մասին, 1892 թ. Գեղամ վարդապետ Բաբաջանյանցի դեմ Օձունի բնակչության բողոքի մասին[3] եւ այլն: Քահանաների վարքի վերաբերյալ կազմվել են բազում գործեր[4]: Կարգազանցները հանդես են եկել գրավոր խոստովանությամբ, պատասխանատվության են ենթարկվել կատարած զեղծարարությունների համար:

Առավել մեծ թիվ են կազմում հոգեւորականների բողոք-դիմումները կոնսիստորիային՝ կապված ծիսերում առկա խնդիրների հետ: Նմանատիպ դիմումները, չնայած անհատների կողմից գրված, բայց հսկայական նշանակություն են ստանում, քանի որ տեղեկություն են հաղորդում նաեւ այլ հարցերի վերաբերյալ: ԺԸ.-ԺԹ. դդ. Վրաստանում եւ նրան ենթակա հայկական տարածքներում բնակվող հայերի թվաքանակի մասին պաշտոնական վիճակագրության բացակայությունն ինքնին մեծ արժեք է հաղորդում թեմի նյութերին: Օրինակ՝ Լոռիի Շնող գյուղի ծիսատեր Ալեքսանդր քին. Տեր-Մելիքսեթյանցը 1902 թ. հոկտեմբերի 28-ի իր դիմումում գրում է, որ գյուղը բաժանված է երկու թաղամասի՝ երկու քահանայով: Ինքը քահանա է հին թաղամասում, ուր կա 70 տուն, մեկ ուրիշն էլ՝ նոր թաղամասում՝ 230 տուն բնակչությամբ: Ժողովուրդը թշվառությունից հին թաղամասից հեռանում է դեպի նոր թաղ, ուստի խնդրում է քահանայական տարբեր թաղերի արդյունքները երկու հավասար մասի բաժանել կամ ծիսերը հավասարեցնել: Դիմումի համաձայն կազմվել է գործ՝ «Շնողի քահանա Ալեքսանդր Տեր-Մելիքսեթյանցի ծիսերի սակավության մասին», որն ընդգրկում է 1902 թ. նոյեմբերի 1-ից մինչեւ 1903 թ. մայիսի 26-ը[5]:

1896 թ. մայիսի 3-ին կազմված «Բաղալ Մաթեւոսյանին Աթան եւ Ահնիձոր գյուղերի եկեղեցիների քահանա ձեռնադրելու մասին» գործում նշվում է, որ Ահնիձոր գյուղի բնակչությունը կազմում է 10 տուն, Աթանինը՝ 14 եւ չունեն սեփական քահանա[6]: Դսեղի հասարակության խնդրագրում գրված է, որ գյուղը բաղկացած է ավելի քան 160 ծխից. նույն փաստաթղթի էջ 8-ում Դսեղի բնակչության երկրորդ խնդրագրում գրված է, որ գյուղի բնակիչների թիվը 200 տնից ավելի է[7]:

Թեմին ենթակա բնակչության էթնիկ կազմի եւ թվաքանակի մասին արժեքավոր եւ

3 Անդ, գ. 537, 963, 971, 1020:
4 Անդ, գ. 319, 341, 392:
5 Անդ, գ. 319, 326:
6 Անդ, գ. 555:
7 Անդ, գ. 620, էջ 1, 8:

եզակի աղբյուր են վանքերի եկամուտների եւ ծախսերի, տարբեր վանքապատկան գյուղերի ծնվածների, մկրտվածների, ամուսնացածների, մահացածների ծիսամատյանները:

Ըստ Լոռու վիճակի՝ ծնվածների, ամուսնացողների եւ մահացածների թիվը ներկայացնող ցուցակների՝ Հայտարբեկ, Ուռուտ, Լեջան, Ազարակ, Ջալալօղլի, Գարգառ, Գյուլաքարակ, Վարդաբլուր, Կուրթան, Ձորագյուղ, Շահալի, Դսեղ, Մարց, Ղաչաղան, Այգեհատ, Ծաթեր, Արդվի, Օձուն, Ամոջ, Աքորի, Սանահին, Դուռնուկ, Ճոճկան, Լոռուբերդ՝ մոտ 25 անուն գյուղերում[8] 1850 թ. ծնվել է 234, պսակվել 62, մահացել 64 մարդ[9]:

ԺԸ. դարի վերջերին եւ ԺԹ. դարում Լոռիի գյուղերի մի մասը վանքապատկան էր, մի մասը՝ կալվածատիրական, ինչը մշտապես վեճերի առիթ է եղել: Լինելով հոգեւոր կազմակերպություն՝ կոնսիստորիան, բնականաբար, գործուն միջամտում էր նման հարցերին, եւ հողային վեճերի քննությունը դարձել էր նրա գործունեության կարեւոր մասը:

Լոռիի խոշոր հողատերեր էին Հաղպատի եւ Սանահինի վանքերը, ուստի նման վիճելի հարցեր ծագել են հիմնականում նշված վանքերի եւ գյուղերի կալվածատերերի միջեւ: ԺԹ. դ. սկզբին Հաղպատի վանքին էին պատկանում Ծնող, Ճոճկան, Ախթալա, Որնակ եւ այլ գյուղեր, այգիներ, արոտավայրեր, Մադանի պղնձահանքը: Սակայն վանքի տնտեսության թուլացմանը զուգընթաց, որոշ գյուղեր զավթում է տեղի կալվածատեր իշխան Բարաթովը:

Կոնսիստորիայում 1806 թ. հունվարի 25-ի դրությամբ կազմվել է մի քանի գործ՝ Հաղպատի վանքի կալվածքների տնօրինության շուրջ Հայոց Եկեղեցու եւ իշխան Դավիթ Բարաթովի միջեւ եղած վեճի մասին[10]: Վեճն ընթանում էր հիմնականում վանքապատկան արոտատեղիների շուրջ: Միայն խոտհարքի պատճառով Հաղպատի վանքապատկան եւ Բարաթովի ճորտերի միջեւ ընդհարման մասին գործն ընդգրկում է մոտ 205 էջ:

Կարելի է ենթադրել, որ կոնսիստորիային չի հաջողվել լուծել վեճը, քանի որ 1815-1816 թթ. Հաղպատ գյուղի սեփականության շուրջ պայքարը Լոռիի ազնվականներ Բարաթովների, Պոպունաբեկովների եւ Թիֆլիսի հայոց հոգեւոր թեմի միջեւ շարունակվում էր[11]: Նրանք բոլորն էլ գյուղը համարել են իրենց սեփականությունը: Մյուս կողմից, վանքի հողերի եւ ամբողջ գյուղի նկատմամբ սեփականատիրական նկրտումներ են դրսեւորում նաեւ վրացի իշխանները. այդ մասին Ամենայն Հայոց Կաթողիկոս Հովհաննես Կարբեցին (1762-1849) 1833 թ. ապրիլի 21-ին զանգատվում է Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետ Գ. Ռոզենին[12]:

Կազմվել է գործ՝ ուղղված Վրաստանի բարձրագույն կառավարության «Իսպոլնիտելնի էքսպեդիցիային», որ վերջինս պարտավոր է ստուգել Հաղպատի հողերի պատկանելության հարցը[13]: Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Պ. Ջավիլեյսկին 1836

8 Գյուղերից մեկի անունն անընթեռնելի է, ենթադրում ենք, որ դա կարող է լինել Քարինջ կամ Ծաթեր գյուղը:

9 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2716, էջ 33:

10 Տե՛ս անդ, գ. 2364, 2393, 2398:

11 Տե՛ս Մատենադարան (ՄԱՄ), Կաթողիկոսական դիվան, թղթ. 27, վավ. 79, թթ. 1-2, վավ. 106, թթ. 1-11:

12 Տե՛ս անդ, թղթ. 78, վավ. 41, թթ. 1-4:

13 Տե՛ս ՀԱՀ, ֆ. 53, ց. 1, գ. 2184, էջ 23:

թ. հուլիսին հրամայել է Բորչալուի գլխավոր պրիստավին մանրամասն քննություն անցկացնել «...յաղագս արօտատեղւոց պատկանելոց Հաղպատի վանից...», որը իշխան Դավիթ Բարաթովն անօրինաբար յուրացրել է[14]: Որպես վկաներ հարցաքննվում են Շնողի եւ Ուզունլարի (Օձուն) բնակիչները, որոնք հաստատում են, որ գյուղի արոտատեղիները միշտ պատկանել են Հաղպատի վանքին, որի ճորտերը այն ժամանակին վարել են: Գործին կցված է նաեւ ցուցակ՝ Դավիթ Բարաթովի կողմից հաղպատցիների հափշտակված գույքի մասին: Ութ կետով նշվում է, թե որ գյուղացուց ինչ է յուրացվել:

Թեեւ գործը 1844 թ. սեպտեմբերի 15-ով ավարտվում է, այնուամենայնիվ, հարցը լուծում չի ստանում, քանի որ թիվ 2393 գործից տեղեկանում ենք, որ 1868 թ. փետրվարի 26-ին Հաղպատի վանահայր Հովսեփ Վարդանյանը Վրաստանի եւ Իմերեթի հայոց վիճակային կոնսիստորիային ուղղված իր հայտարարության մեջ խնդրում է պաշտպանել վանքապատկան սեփականությունը Դ. Բարաթովի ինքնակամ գործողություններից: Նմանատիպ բովանդակությամբ հայտարարություն է արված 1868 թ. հուլիսի 9-ին:

«Յաղագս կալուածոց Սանահնի վանից» գործում (թիվ 2918) Վարդան արքեպ. Օձնեցին կոնսիստորիային է ներկայացնում Սանահին եւ Որնակ գյուղերի հողերի միջեւ տարածքային վեճի մանրամասները, որտեղից պարզ է դառնում, որ «երկրաչափական նշանօք» առանձնացվել են իշխան Արղությաններին եւ վանքին պատկանող հողերը:

Կոնսիստորիայի իրավասության շրջանակներում է եղել կապալագրերով տարածքներ հատկացնելու մենաշնորհը: Օրինակ՝ եկեղեցապատկան Մարց, Շամլուղ եւ այլ գյուղեր հատկացվել են կապալառու Մարտիրոս Տեր-Աբրահամյանին: Նման դեպքում գյուղերը շարունակել են մնալ վանքապատկան՝ հարկ վճարելով միաժամանակ վանքին եւ կապալառուին: Դա ավելի է ծանրացրել հարկատու բնակչության տնտեսական դրությունը: Մանավանդ, որ «նոր ազնվականները», բացի հարկահանությունից, միջամտում էին տարածքի այլ գործերին, ինչպես օրինակ, բնակիչների տեղափոխությանը: Միայն նրանց թույլտվությամբ կարող էին տվյալ տարածքում այլ վայրերից բնակիչներ վերաբնակվել: Գյուղացիները երբեմն աղքատությունից, իսկ ավելի հաճախ՝ պարզապես տուրք տալով ավանդական սովորույթին՝ հրաժարվել են հասույթ վճարել կապալառուին, իրենց բողոքներն են հայտնել կոնսիստորիային, ինչպես, օրինակ, Մարցի բնակչության՝ 1896 հունիսի 12-ի դիմումը, որի տակ նշված են հեղինակների անունները[15]: Ազնվականներն ու կառավարիչներն իրենց հերթին են գյուղացիների դեմ բողոքներով դիմել կոնսիստորիա: Պահպանվել է Մարցի եկեղեցական կալվածքների կառավարչի հայտարարությունը Լորուտ գյուղի «ապերախտ ու ապստամբ» հասարակության վերաբերյալ[16]: Մարտիրոս Տեր-Աբրահամյանը գրում է. «...Չկամեցան կամովին յատուցանել ինձ հասոյթս...», եւ խնդրում է կոնսիստորիային հարցին լուծում տալ[17]: Նման դեպքերում գործերը քննվել են դատական հարթության վրա: «Յաղագս եկեղեցական կալուածոց Մարցայ» գործի հիման վրա կազմվել է արձանագրություն, թեեւ գյուղերի սահմանները շարունակել են մնալ վիճելի:

14 Անդ, գ. 2184, էջ 23:
15 Տե՛ս անդ, գ. 2423, էջ 32-33:
16 Տե՛ս անդ, գ. 2423, էջ 1:
17 Անդ, գ. 2397, էջ 47:

Նմանապիպ հարցերի քննությունն այնքան էլ մեծ տեղ չի զբաղեցնում կոնսիստորիայի գործառույթում: Հնարավոր է, որ կոնսիստորիան փուրք չի փվել իր կողմից հող ձեռք բերած կապալառուների դեմ բողոքներին եւ հանդես է եկել վերջիններիս պաշտպանությամբ, մանավանդ, որ վեճեր են եղել նաեւ կապալառուների եւ մյուս ազնվականների[18] միջեւ: Մարտիրոս Տեր-Աբրահամյանն իր խնդրագրերում բազմիցս գրում է, որ ազնվական Բաշբեուկյանը յուրացրել է հարկերի մի մասը[19]: Նա նաեւ նշում է, որ գյուղի մի մասը հափշտակել են Ղազախի թուրքերը եւ գասանորդից ոչինչ չեն տալիս: Խնդրում է իրեն վերադարձնել կապալագրով նշված տարածքները:

Հավանաբար, դժգոհ կոնսիստորիայի անտարբերությունից՝ թիֆլիսաբնակ Եզեկ Տեր-Բարսեղյան Աբովյանը 1896 թ. մայիսի 16-ին դարձյալ խնդրագիր է հղում՝ նշելով, որ Օձունի եկեղեցապատկան Մարցի կալվածքը, պարոն Տիգրան Տեր-Դավթյանը գասը գարուց ավելի կառավարելով եւ բոլոր եկամուտները յուրացնելով՝ հոգեւոր իշխանությանը ոչինչ չի տվել: Խնդրում է կապալով իրեն վերահանձնել Մարց եւ Լորուտ գյուղերը եկեղեցապատկան բոլոր կալվածքներով՝ տարեկան 400 ռուբլի կապալադրամով[20]:

Այս գործերից միաժամանակ տեղեկանում ենք Լորուտ, Ահնիձոր եւ Շամուտ գյուղերի նկատմամբ Ղազախի թուրքերի ոտնձգությունների մասին (գործ թիվ 2940):

Ուշադրության արժանի են Լոռիի, Սոմխեթի, Ղազախի եւ Շամշադինի եկեղեցական կալվածքների տարեկան ելքի ու մուտքի մատյանները՝ «վիճակների արդյունքների» ցուցակները[21]: Դրանցում ըստ թվականների (1830-ականներից որոշ ընդմիջումներով մինչեւ 1900 թվականը) եւ ամիսների նշվում է գյուղերից գանձված հարկը՝ ռուբլով, հիմնականում կաթնամթերքից, պտղից, հացահատիկից: Ներկայացված են հասույթի բաշխման տարատեսակները՝ որպես քահանայի հոգեբաժին, աթոռահարկ, սրբադրամ, ուիտպատեղիներից ստացված արդյունքներ, թղթի եւ թանաքի ծախս եւ այլն:

Ցուցակները կազմել են տարածքի գործակատարները, ուղարկվել են կոնսիստորիա, որի դիմաց ստացել են ստացական՝ «ապահովագիր»: Նշված ցուցակների արժեքն այն է, որ ուղղակիորեն պատկերացում են տալիս հայ բնակչության տարեկան եկամուտների, ըստ այդմ նաեւ՝ ընկերային-տնտեսական իրավիճակի մասին: Եթե դիտարկենք Լոռիի օրինակով, ապա հետեւելով ըստ տարիների՝ տեսնում ենք, որ թե՛ մուծված մթերքների եւ թե՛ սրբադրամի ու այլ հարկերի քանակով առավել հարկատու են եղել Օձուն, Դսեղ, Կուրթան, Վարդաբլուր, Գյուլաքարակ, Ազարակ, Գարգառ, Հայտարբեկ, Ուռուտ գյուղերը: Առավել աղքատ գյուղերի թվին են պատկանում Արդվինը, Քարինջը, Մարցը, Ձորագյուղը, Լոռուբերդը, Մղարթը, Ծաթերը, Հոբարձին:

Դիտարկենք մի քանի օրինակ. «Ցուցակ կալուածոց եւ ճորտոց Հաղպատաց» 7 թերթից բաղկացած գործում նշվում են 1820-1824 թթ. ընկած ժամանակահատվածի եկամուտները՝ որքան հարկ է տրվել վանքին[22]:

Ըստ Ղազախի եւ Շամշադինի գործակատարի հայտարարության՝ 1846 թ. հուն-

18 Խոսքը ավանդական, ժառանգական ազնվականների մասին է:
19 Տե՛ս ՀԱՀ, ֆ. 53, ց. 1, գ. 2397, էջ 155, 166:
20 Տե՛ս անդ, էջ 15:
21 Տե՛ս անդ, գ. 2572, 2669, 2670, 2672, 2710 եւ այլն:
22 Տե՛ս անդ, գ. 2572:

վարին գոյացած հարկի արդյունքն է 30 ռուբլի, որից 15 ռուբլին հատկացվում է որպես հանգուցյալ Գեորգ քահանայի հոգեբաժին, փետրվար եւ մարտ ամիսներին գոյացել է 51 ռուբլի, ապրիլ-մայիսին՝ 35 ռուբլի, Մարց գյուղից գոյացել է 14 ռուբլի արծաթ, հունիս-հուլիս-օգոստոս ամիսներին՝ 30 ռուբլի արծաթ, 40 կոպեկ[23]:

Լոռիի գործակատարի՝ կոնսիստորիային ուղղված հայտարարության մեջ 1851 թ. արդյունքների մասին նշվում է, որ հունվար ամսվա արդյունքից գոյացել է 40 ռուբլի 85 կոպեկ, որից դուրս է եկել թղթի-թանաքի ծախս՝ 6 ռուբլի, մնացածը՝ «մատուցանեմ եւ խնդրեմ զապահովագիր»: Ապա ըստ գյուղերի տրվում է, թե որ անձը որքան հարկ է տվել՝ թվով 28 անուն: Փետրվար ամսվա համար նշված է 12 անուն, գումարը՝ 20 ռուբլի 40 կոպեկ, մարտին գոյացել է 11 ռուբլի, հունիսին՝ 6 ռուբլի 20 կոպեկ, հուլիսին՝ 3, օգոստոս-սեպտեմբերին՝ 4 ռուբլի եւ այլն[24]:

Եթե ցուցակների թվային տվյալների հիման վրա հետեւենք տարիների եկամուտների թվի տատանմանը, կտեսնենք, որ թվերը հաճախ շատ կտրուկ տարբերություն են տալիս: Ակնհայտ է, որ գոյացած հարկի քանակը գնալով նվազել է, բնակչության դժվար ապրելակերպի հետեւանքով: Կուրթան գյուղի ծիսատեր Եփրեմ քհն. Տեր-Հարությունյանը Գեորգ արքեպ. Սուրենյանցին ուղղված խնդրագրում գրում է, որ «հազիվ կարողանում են ապրել, հասարակությունը սակավահող է եւ աղքատ»[25]:

Հարկերի մեջ ամենամեծ տեղն զբաղեցնում են աջհամբույրն ու հոգեբաժինները: 1854 թ. միայն ապրիլ-հունիս ամիսներին Լոռիից գոյացել է 21 ռուբլի 60 կոպ. արծաթ աջհամբույր եւ սրբադրամ, հուլիս-սեպտեմբերին՝ 21 ռուբլի 20 կոպ.[26]: Սոմխեթի գործակատարի «Ցուցակ արդէանց վիճակին Սօմխէթ գոյացեալ յընթացս յունուար եւ փետրուար ամսոյ 1861 ամի» հայտարարության մեջ նշված են Վաշլովան, Ծուլավեր, Բոլնիս, Կումիս, Կիանեթ, Դաղեթ, Քվեշ, Դուռնուկ, Դմանիս, Թելեթ, Շամշուլդե, Աղքյորփի, Նավթլուղ, Գորնջուկ, Ծղնեթ, Ջալտամ գյուղերի միայն աջհամբույրի (29 ռ. 70 կ.), հոգեբաժնի (30 ռ. 40 կ.) եւ սրբադրամի (6 ռ. 80 կ.) արդյունքները[27]:

Կարեւոր են տեղեկագրերը, մարդահամարները, չափաբերական մատյանները, որոնք ցուցակներ են՝ թվային տվյալներով, ինչպես օրինակ, «Վանքապատկան կալվածքների քանակի մասին տեղեկագրեր», «Սանահին վանքին կից հոգեւոր ուսումնարանի աշակերտների թվի, առաջադիմության, սննդի մատակարարման եւ նվիրատվությունների մասին տեղեկագրեր», կամ՝ «Տեղեկագրեր Վրաստանի եւ Իմերեթի թեմի հայաբնակ քաղաքների եւ գյուղերի բնակչության թվի մասին»: Կարեւոր փաստաթղթեր են Ղազախի նահանգի հայ բնակչության 1839 թ. մարտի 22-ի մարդահամարի տվյալները[28]:

Բացի վերը նշվածներից, կոնսիստորիան զբաղվել է նաեւ տարբեր մարդկանց ծննդյան եւ մկրտության, պատվավոր քաղաքացու վկայականներ տալու, կրոնափո-

23 Անդ, գ. 2672, էջ 1-9, 14-19:
24 Տե՛ս անդ, գ. 2716, էջ 1-31:
25 Անդ, գ. 590:
26 Տե՛ս անդ, գ. 2740, էջ 9, 17:
27 Տե՛ս անդ, գ. 2797, էջ 11:
28 Անդ, գ. 2743, էջ 107-110, գ. 3800, էջ 49-50:

խության, կորած մարդկանց որոնումների եւ այլ հարցերով: Վերահսկել է հայկական գյուղերում տեղական հոգեւոր կազմակերպությունների գործողությունները, այդ թվում՝ հոգեւոր կոչումներ տալը, քահանաների ձեռնադրությունը, երեսփոխանների ընտրությունը, վանահայրերի նշանակումը, տարբեր անձանց եկեղեցական ապաշխարանքի ենթարկելը եւ այլն:

Այսպիսով, Վրաստանի եւ Իմերեթի հայոց վիճակային կոնսիստորիան հսկայական դեր է կատարել իր թեմի հայ բնակչության կյանքում: Պետականությունից զուրկ եւ այլ պետությունների տիրապետության տակ գտնվող հայ ժողովրդի մի հատվածի համար այն յուրահատուկ կառավարման համակարգի դեր է կատարել՝ երբեմն սպանձնելով նաեւ աշխարհիկ իշխանության գործառույթներ: Այդ են վկայում մարդահամարները, չափաբերական մատյանները եւ այլ փաստաթղթեր:

Կոնսիստորիայի գոյությամբ ժողովրդի ընկերային-տնտեսական եւ հոգեւոր կյանքը բավականին կանոնակարգվել է, բնակչությունը ենթարկվել է հաշվառման, գերիշխել է եկեղեցական հարկի կանոնավոր համակարգ, ինչը խիստ դրական էր տվյալ ժամանակաշրջանում: Կոնսիստորիայի շնորհիվ կանխվել կամ բացահայտվել են բազմաթիվ զեղծարարություններ, հանցագործություններ, այն զսպաշապիկի դեր է կատարել կանոնազանց հոգեւորականների, ազնվականների ու այլ պաշտոնյաների գործունեության ճանապարհին, վերջիններիս ստիպել հաշվի նստել թեմի որոշումների հետ:

Հայ բնակիչներին ենթարկելով հայ հոգեւոր կազմակերպություններին, նրանց հնարավորություն տալով պահպանել իրենց լուսավորչական հավատքը՝ կոնսիստորիան դրանով իսկ նպաստել է հայապահպանությանը: Ուշագրավ է Ներսես Կաթողիկոսի 1850 թ. կոնդակը՝ ուղղված վիրահայոց բոլոր քահանաներին՝ հայերեն սովորելու համար իրենց որդիներին Սանահինի վանք ուղարկելու մասին[29]:

Վրաստանի եւ Իմերեթի հայոց վիճակային կոնսիստորիայի թղթաբանական գործունեության ուսումնասիրությունից ակնհայտ է, որ թեմի իրավասության տակ գտնվող տարածքները, հատկապես Լոռին ամբողջությամբ, իսկ Ղազախն ու Ծամշադինը մեծ մասամբ ունեին հայ հոծ բնակչություն, ինչը նաեւ հակոտնյա է վրացական կեղծ պատմագրությանը: Դրա վառ ապացույցն է այն փաստը, որ չնայած նստավայր ունենալով Թիֆլիսը, կոնսիստորիայի գրագրությունները տարվել են զուտ հայերենով (բացառությամբ մի քանի վրացերեն եւ ռուսերեն փաստաթղթերի, որոնք ունեն համարժեք հայերեն թարգմանություն):

Վրաստանի եւ Իմերեթի հայոց վիճակային կոնսիստորիան լուծարվել է 1922 թ.:

29 Տե՛ս անդ, գ. 93: